

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Լյովա Խաչատրյանի, Մարտոն Գրիգորյանի, Աբրահամ Մանուկյանի, Մուշեղ Պետոյանի, Վահագն Մախսուդյանի, Վահան Կարապետյանի, Գրիգորի Մարգարյանի, Արմեն Ավետիսյանի, Արա Արամյանի և Հայկ Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-518-13.05.2014-ԳԲ-010/0) վերաբերյալ:

1. Օրենքի նախագծի 1-ին հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ հասարակական քննարկումների արձանագրություններն իրավական փաստաթղթեր չեն և չեն կարող հիմք հանդիսանալ դրական կամ բացասական փորձաքննական եզրակացություն տալու համար: Բացի դրանից, հասարակական քննարկումների մասնակից հասարա-

կական կազմակերպությունները կարող են կարծիք տալ՝ ոչ միայն օբյեկտիվ մասնագիտական դիրքորոշումից ելնելով:

2. Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի, օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության և հայեցակարգի ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հարաբերությունները, ինչից բխում է, որ գույքային պատասխանատվության հետ կապված հարաբերությունները նշված օրենքի կարգավորման առարկան չեն: Գույքային պատասխանատվության հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 27-րդ, 60-րդ, 62-րդ հոդվածներով և այլն:

3. Հարկ ենք համարում տեղեկացնել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացրել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծ (Կ-312-05.08.2013-ԳԲ-010/0), որն արդեն իսկ ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Ազգային ժողովի պատգամավորների հեղինակած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու  
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ «Շրջակա  
միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
նախագծի վերաբերյալ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի  
հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն  
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու  
մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ  
կոռուպցիոն գործոն չի պարունակում:

## ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

### «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա **կարող է առաջացնել բացասական հետևանքներ**՝ ելնելով այն հանգամանքից, որ Նախագծով արված առաջարկները վերաբերվում են լիազորված անձի կողմից տրվող մասնագիտական եզրակացության ոչ պատշաճ լինելու դեպքում պատասխանատվության սահմանմանը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ չկան շրջակա միջավայրին պատճառված վնասի չափման մեխանիզմներ և բնականաբար յուրաքանչյուր գործունեություն շրջակա միջավայրի վրա ունի որոշակի ազդեցություն, ուստի վերոնշյալ առաջարկների ընդունումը կարող է հանգեցնել նրան, որ լիազորված անձինք ուղղակի կիրառվեն մասնակցել փորձաքննական գործընթացին, ինչի հետևանքով հնարավոր չի լինի լիարժեք գործընթացի իրականացում: Փորձաքննության գործընթացի հիմնական նպատակն է կանխարգելել կամ նվազագույնի հասցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Բնականաբար տվյալ պարագայում հնարավոր չի լինի կատարել գործող օրենքի՝ գործընթացին լիազոր անձանց ներգրավման, պահանջը և կիրականացվի թերի փորձաքննական գործընթաց:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին առնչվում է, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասի՝ հետևյալ առարկությունների և առաջարկությունների ընդունման դեպքում.

Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 11-րդ հոդվածում առաջարկվող լրացումն ընդունելի չէ, քանի որ օրենքի նշված հոդվածի 1-ին մասով արդեն իսկ սահմանված է <<մասնագիտական եզրակացության և հասարակական քննարկումների արդյունքների արձանագրությունների հիման վրա փորձաքննական եզրակացություն տալու>> պահանջ և որևէ նոր պահանջ (պայման) չի առաջադրվում:

Նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 18-րդ հոդվածում առաջարկվող լրացմամբ լիազորված անձանց համար գույքային պատասխանատվության նախատեսումն օրենքում նպատակահարմար չէ և դրա կարգավորումից դուրս է: Բացի այդ օրենքի 18-րդ հոդվածով թվարկված են բոլոր այն պայմանները, որոնք լիազորված անձը մասնագիտական եզրակացությունը մշակելիս պարտավոր է պահպանել, իսկ խախտման համար պատասխանատվություն կրել այլ օրենքով սահմանված կարգով:

Նախագծի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի  
մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է բնապահպանության ոլորտում ներդնել պատասխանատվության ինստիտուտ՝ սահմանելով շրջակա միջավայրին հասցված վնասի չափի հաշվարկման մեթոդներն ու մեխանիզմները:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի  
տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման  
ազդեցության գնահատման**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է բնապահպանական փորձաքննական եզրակացության տրամադրման կարգին, ինչպես նաև տվյալ եզրակացության տրամադրման պատասխանատվության սահմանմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով առաջարկում է սահմանել, որ լիազորված անձը կրում է *գույքային պատասխանատվություն* իր կողմից ոչ պատշաճ մասնագիտական եզրակացության հիման վրա փորձաքննության դրական եզրակացություն ստացած գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրին, կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի համար:

Միաժամանակ, նախատեսվում է, որ շրջակա միջավայրին հասցված վնասի չափի հաշվարկման մեթոդներն ու մեխանիզմները սահմանվում են ՀՀ կառավարության կողմից:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում ենք, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունումը կարող է հանգեցնել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների եկամուտների ավելացման:

Հայտնում ենք նաև, որ վերոնշյալ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների եկամուտների վրա կոնկրետ գնահատել հնարավոր չէ՝ հաշվի առնելով վերոնշյալ խախտումների հնարավոր թվի վերաբերյալ վիճակագրական կամ որևէ այլ տեղեկատվության բացակայությունը:

Միաժամանակ Նախագծի թե ընդունումը թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Եզրակացություն

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:



Պ-518-13.05.2014-ԳԲ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության 1995 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-21 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1 մասով.

«1.1. Փորձաքննական եզրակացությունը տրվում է դրական՝ բացառապես քննարկումների արդյունքում դրական արձանագրություն ունենալու եւ մասնագիտական դրական եզրակացության առկայության դեպքում:»:

**Հոդված 2.** Օրենքի 18-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

« Լիազորված անձը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն՝ իր կողմից տրված ոչ պատշաճ մասնագիտական եզրակացության հիման վրա փորձաքննական դրական եզրակացություն ստացած գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրին, կենդանական եւ բուսական աշխարհին պատճառված վնասի համար:

Շրջակա միջավայրին հասցված վնասի չափի հաշվարկման մեթոդներն ու մեխանիզմները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հիմնավորում**

**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում լրացումներ  
կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության**

Նախագծով փորձ է արվում հիմք դնել բնապահպանության ոլորտում պատասխանատվության ինտիտուտը:

Նշված ոլորտում գործող օրենսդրության պատասխանատվության մեխանիզմների հստակեցման հնարավորությունները լայն չեն, քանի որ շրջակա միջավայրին հասցված վնասի չափի հաշվարկման մեթոդներն ու մեխանիզմները սահմանված չեն: